Միսաք Մեծարենց

Կյանքի երգը

Ահաբեկիչ կնճիռներուն մեջ կյանքին
Լալահառաչ, սուր հծծյուններ ինձ ըսին.
«Ամեն հույսեր մեծ պարապին կը հանգին,
Ունայնություն մը կը պրկե կյանքը սին:

Ամեն ծաղիկ խամրում մ’ունի իրեն մոտ,
Ու ամեն կյանք՝ մութ ստվեր մը իր ետին.
Ծաղիկներու բուրումին պես խնկահոտ
Ամեն հույսեր դեռ չրծլած կ’անհետին»:

Բայց մխացող խոհերուս մեջ ծիրանի
Լույս մը հանկարծ սրպրդեցավ շողալով,
Կյանքի փարփառ երգն ոսկեսար, գեղանի,
Որուն ցվերջ ունկնդրեցի դողալով:

«Տխուր ողբեր թող չքանդեն քեզ,- ըսավ,-
Թող չցնդին ոսկի հույսերդ ցիրուցան.
Իր վերջն ունի ամեն կնճիռ, ամեն ցավ՝
Ջինք մոռցնող ժպիտները լուսացան:

Ահա ի՛նչպես, տես, կապույտն ալ կամարին
Մերթ ամպերու գորշությունով կ’աղարտի,
Անձրևին տակ իր ժպիտներն կը մարին,

Անձրևին,- այդ լաց,- սակայն երգն է ավարտի:

Ամեն անձրև արև մ’ունի իրմեն վերջ,
Ինչպես ամեն լաց իր ժպիտն արփենի.
Ու տևական ուրախություն մը միշտ պերճ
Պի՛տ հաջորդե ժպիտենրուն երբեմնի»:

1903, հունվար